ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին, Գայի -1.
Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel. 060-75-77-87
E-mail : talinihamaynqapetaran@list.ru

№ 056/2555

10 07 2024թ.

Ա/Ձ Արմինե Բաղդասարյանին
ՀՎՀՀ 57452405

Հարգելի տիկին Բաղդասարյան

Թալին համայնքի կարիքների համար ***ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-24/89*** ծածկագրով գնման ընթացակարգի Ձեր ներկայացրած մասնակցության հայտը, պետական վերահսկողության ծառայության կողմից կատարված վերլուծության արդյունքում պարզվել է, որ Դուք մասնակցության հայտ ներկայացնելու իրավասություն չունեիք, քանի որ Ա/Ձ Արմեն Մազմանյանի ՀՎՀՀ 57279443 միջև առկա է փոխկապակցվածություն:

Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկի համաձայն՝ Ա/Ձ Արմեն Մազմանյանը (ՀՎՀՀ՝ 57279443) 2022 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 18-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ուշագրավ է այն, որ Ա/Ձ Արմինե Բաղդասարյանի և Ա/Ձ Արմեն Մազմանյանի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից 2024 թվականի հուլիսի 3-ին թիվ 43/18/109218-24 գրությամբ Ծառայությանը տրամադրված տեղեկատվության համաձայն Արմինե Բաղդասարյանը և Արմեն Մազմանյանը փաստացի բնակվում են միևնույն հասցեում և վարում են ընդհանուր տնտեսություն:

Այսպես՝ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, **գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում**: ...:»

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ***ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված***, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի: (...)

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ **մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:**

Ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ ***Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: (...)***

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով սահմանված իրավակարգավորումներով որոշում է կայացվել **Ա/Ձ Արմինե Բաղդասարյանին (ՀՎՀՀ՝ 57452405) (այսուհետ՝ Ընկերություն)** հայտը համարել անբավարար **և տվյալները ներկայացնել լիազոր մարմին** գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Հարգանքով՝

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Տ.Սափեյան**

Կատարող՝ Աղավնի Հովհաննիսյան

Հեռ՝ +37493 637127